

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից է, բավականաչափ հարուստ, զարգացած և ինքնատիպ։ Հարուստ է նաև այն գրական ժառանգությունը, որ մեզ են թողել մեր նախորդ սերունդները։ Հարուստ ու բազմազան է կետադրությունը հայ ձևագրերում, տպագիր գրքերում ու մամուլում։ Գրաբարի քերականները բազմաթիվ այլ խնդիրների հետ միասին շարադրել են նաև կետադրության հարցը։ Հայերենի կետադրության վերաբերյալ կան մասնակի ուսումնասիրություններ։ Այս ուղղությամբ հիշատակության արժանի է հայագետ Հ. Տաշյանի «Ակնարկ մը հայ հնագրության վրա» աշխատությունը (1889)։ Հնագրության վերաբերող բազմաթիվ հարցեր շարադրելուց հետո, գրքի վերջում, Հ. Տաշյանն անդրադառնում է նաև կետադրությանը։

Մի քանի թերթ ընդգրկող այդ բաժնում Հ. Տաշյանն ամենաընդհանուր գծերով նշում է, թե ինչ կետադրական նշաններ են գործածվել մեր հին գրչագրերում և հետագա շրջանում ինչ նոր կետեր են փոխ առնված։ Սակայն, ինչպես ինքնուրույն, այնպես էլ նորաժողով կետերի մասին չի ասվում, թե երբ, ինչպես և որտեղ են գործածվում։ Այնուամենայնիվ կետադրական նշանների վերաբերյալ Հ. Տաշյանի հոգվածը առաջինն է հայագիտության մեջ և այդ տեսակետից էլ շատ արժեքավոր։ Երկրորդ աշխատությունը Պետրոգրադի համալսարանի պրիվատ դոցենտ Ն. Ադոնցի «Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնությունք նորին» ուսումնասիրությունն է (1915), որտեղ համեմատությամբ տրված են հույն քերականի և հայ քերականների աշխատությունները, ինչպես նաև հեղինակի վերլուծություններն ու եզրակացությունները։

Գրաբարի շարահյուսության վերաբերյալ եղած աշխատություններից ուշագրության է արժանի հայագետ Ս. Մալխասյանի «Գրաբարի համաձայնությունը» (Թիֆլիս, 1892), որտեղ մանրամասնորեն շարադրված է գրաբարի պարզ և բարդ նախադասությունների շարադասությունը։ Կետադրության հարցն այս աշխատության մեջ ևս շատ աննշան տեղ է գրավել և բուն գրաբարի կետադրական սխառմից բավական հեռացել է։ Ս. Մալխասյանը տրոհության խմբում (ըստ հեղինակի՝ բաժանական) դնում է 8 կետադրական նշան՝ վերջակետ, միջակետ, ստորակետ, բուլբ, բազմակետ, գիծ, շակերտ, փակագիծ։

Նախապես ասենք, որ հեղինակը շարահյուսության բաժնում ոչ թե մեկնաբանում է գրաբարի փաստական կետադրությունը, այլ ինքն է հորինում։ Այս առթիվ նա գրում է. «Հին ձևագրերում կետադրությունը շատ անկանոն է։ Նոցանից եղած տպագրություններին մեջ հրատարակողները կետադրությունն արել են ամեն մեկն յուր հասկացողությամբ, հետևելով որևէ եվրոպական լեզվի։ Այս պատճառով մենք կետադրության օրենքները շրջանցինք մեր հին մատենագրությունից, այլ կազմեցինք մեզանից, աշխարհաբար լեզվով, որի մեջ ավելի ընդհանրացված է եվրոպական կետադրությունը։ Բայց գրաբարի մեջ էլ, քանի որ ուրիշ ճիշտ և որոշ կետադրություն չկա՝ կարելի է հետևել միևնույն կանոններին»¹։

Ճշմարիտն այն է, որ մեր հին մատենագրական երկերի հետագա հրատարակիչները տեքստերը տրոհել են ըստ իրենց ժամանակի գործածական կետադրական նշանների, սակայն սխալ է այն կարծիքը, որ գրաբարի շրջանում իբր թե «ճիշտ և որոշ կետադրություն չկա» և գրաբարի տեքստերը կետադրելիս կարելի է առաջնորդվել աշխարհաբարի կետադրությամբ, որի մեջ «ավելի ընդհանրացած է եվրոպական կետադրությունը»։ Գրաբարի շրջանում, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, տրոհության խմբում դասվել են միայն վերջակետը, միջակետն ու ստորակետը։ Բուլբը քերականների աշխատություններում, սկսած V դարից մինչև XIX դարի սկզբները, ավանդաբար դասվել է առողջանություն նշանների շարքը, մինչդեռ XIII դարից հայ

¹ Ստ. Մալխասյան, Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 157։

մատենագիրներն ու գրիչները այդ նշանը փաստորեն սկսում են գործածել որպես տրոհության նշան (տե՛ս տախտակ № 3)։ Բազմակետն ու փակագիծը գոյություն չեն ունեցել գրաբարի շրջանում, մեր շակերտները գուտ հայկական ծագում ունեն և գրչության մեջ հանդես են գալիս IX դարից։ Հայ քերականական գրչագրերում հարցական և բացականչական նշանները հանդես են գալիս V—VII դարերից, իսկ բուն գրչության մեջ՝ XI—XIII դարերից, մինչդեռ եվրոպական գրականության մեջ այդ նշանները երևան են գալիս XVII դարի վերջերին։ Բացի այդ, հայերենը աշխարհի միակ լեզուն է, որում հարցական ու բացականչական նշանները հենց վաղագույն շրջանից գործածվել են հարցում և բացականչություն պահանջող բառերի վրա և ոչ թե նախադասությունների վերջում, ինչպես այդ արվում է եվրոպական լեզուներում։ Հետաքրքիրն այն է, որ գիծը, որպես բառատրոհիչ նշան, երևացել է XIII դարի հայկական որոշ ձեռագրերում, մինչդեռ եվրոպական գրականության մեջ այն երևում է բավական ուշ, հետին դարերում։

Այսպիսով, գրաբարի շրջանին յուրահատուկ կետադրական նշանները պետք է մեկնաբանվեն ըստ գրաբար գրչագրերի, առանց կապելու եվրոպական լեզուների հետ, որոնց կետադրական նշաններից շատերը հետագա ստեղծագործություն են։ Հայտնի է, որ գրաբարի շրջանում քերականական գրչագրերում ճանաչվել են առողանության 10 նշաններ, մինչդեռ հայագետ Ս. Մալխասյանը հիշատակում է միայն երեքը՝ ոլորակ (հարցական նշան), շեշտ, երկար (բացականչական նշան)։

Սովետական շրջանում այս հարցին անդրադարձել են պրոֆ. Ա. Աբրահամյանը («Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի», 1940 և «Հայկական պալեոգրաֆիա», 1948), բանասեր Գ. Լևոնյանը («Հայ գիրքը և տպագրության արվեստը», 1946) և բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Ջահուկյանը («Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում», 1954)։ Բանասեր Գ. Լևոնյանը միայն թվում է հայերենի գրավոր խոսքում եղած կետադրական նշանները, առանց նրանց գործածության մանրամասների մեջ մտնելու։ Դոկտոր Գ. Ջահուկյանը կետադրության հարցերը քննում է ըստ առանձին բերականական գրչագրերի, այնպես, ինչպես դրանք ձևակերպված են այդ աշխատություններում։

Մեր պատմական շրջանի դրական լեզվի շարահյուսությանը նվիրված գործերից ամենաուշագրավը և համեմատաբար ծավալունը պրոֆ. Հ. Կուսիկյանի «Ակնարկ հայոց գրական լեզվի պատմական շարահյուսության» աշխատությունն է¹։ Սակայն ցավելով պետք է արձանագրել, որ այդ անվանի բանասերը ևս նախադասությունների շարադասության ու կառուցվածքի և նախադասության անդամների կապակցությունների հարցերը քննելուց այն կողմ չի անցնում և շարահյուսության հետ սերտորեն առնչվող կետադրությունը միանգամայն անտեսում է։

Կետադրության հարցերը սերտորեն կապված են շարահյուսության հետ, ուստի այս հարցում մեզ կարող էին օգնության գալ գրաբարի ուսուցման նպատակով կազմված դասագրքերն ու ձեռնարկները, սակայն այդ դասագրքերում ու ձեռնարկներում առ այժմ շարադրված են ձևաբանության հարցերը, իսկ շարահյուսությունը մնում է չուսումնասիրված։

Կետադրության հարցի վերաբերյալ մինչև այժմ չկա մենագրական որևէ ամփոփ աշխատություն։ Գրաբարի և միջին հայերենի կետադրության վերաբերյալ ուսումնասիրության բացը ինքին թերագնահատություն է։

Թեև աշխարհաբարի շրջանի վերաբերյալ նույնպես մենագրական աշխատություններ չկան, սակայն այս շրջանի հայ բանասերներն ու քերականության դասագրքեր կազմողները բավական մանրամասնորեն անդրադարձել են կետադրության հարցերին։

Հիշատակության արժանի են անվանի բանասեր Ա. Այտընյանի², Ս. Պալասանյանի³, ակադեմիկոս հայագետ Մ. Աբեղյանի⁴, դոկտոր-պրոֆեսոր Գ. Սևակի⁵ և այլոց աշխատությունները, որոնց մեջ հեղինակները շարադրել են հայոց լեզվի մեջ գործածվող կետադրական նշանները

¹ Н. К. Кусикян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Москва, 1959.

² Հ. Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866:

³ Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874:

⁴ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, դասագիրք ստորին դասարանների համար, Վաղարշապատ, 1906 և Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912:

⁵ Գ. Սևակ, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 1959:

մատենագիրներն ու գրիչները այդ նշանը փաստորեն սկսում են գործածել որպես տրոհության նշան (տե՛ս տախտակ № 3)։ Բազմակետն ու փակագիծը գոյություն չեն ունեցել գրաբարի շրջանում, մեր չակերտները գույա հայկական ծագում ունեն և գրչության մեջ հանդես են գալիս IX դարից։ Հայ քերականական գրչագրերում հարցական և բացականչական նշանները հանդես են գալիս V—VII դարերից, իսկ բուն գրչության մեջ՝ XI—XIII դարերից, մինչդեռ եվրոպական գրականության մեջ այդ նշանները երևան են գալիս XVII դարի վերջերին։ Բացի այդ, հայերենը աշխարհի միակ լեզուն է, որում հարցական ու բացականչական նշանները հենց վաղադույն շրջանից գործածվել են հարցում և բացականչություն պահանջող բառերի վրա և ոչ թե նախադասությունների վերջում, ինչպես այդ արվում է եվրոպական լեզուներում։ Հետաքրքիրն այն է, որ գիծը, որպես բառատրոհիչ նշան, երևացել է XIII դարի հայկական որոշ ձեռագրերում, մինչդեռ եվրոպական գրականության մեջ այն երևում է բավական ուշ, հետին դարերում։

Այսպիսով, գրաբարի շրջանին յուրահատուկ կետադրական նշանները պետք է մեկնաբանվեն ըստ գրաբար գրչագրերի, առանց կապելու եվրոպական լեզուների հետ, որոնց կետադրական նշաններից շատերը հետագա ստեղծագործություն են։ Հայտնի է, որ գրաբարի շրջանում քերականական գրչագրերում ճանաչվել են առողանության 10 նշաններ, մինչդեռ հայագետ Ս. Մալխասյանը հիշատակում է միայն երեքը՝ ոլորակ (հարցական նշան), շեշտ, երկար (բացականչական նշան)։

Սովետական շրջանում այս հարցին անդրադարձել են պրոֆ. Ա. Աբրահամյանը («Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի», 1940 և «Հայկական պալեոգրաֆիա», 1948), բանասեր Գ. Լևոնյանը («Հայ գիրքը և տպագրության արվեստը», 1946) և բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Ջահուկյանը («Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում», 1954)։ Բանասեր Գ. Լևոնյանը միայն թվում է հայերենի գրավոր խոսքում եղած կետադրական նշանները, առանց նրանց գործածության մանրամասների մեջ մտնելու։ Դոկտոր Գ. Ջահուկյանը կետադրության հարցերը քննում է ըստ առանձին բերականական գրչագրերի, այնպես, ինչպես դրանք ձևակերպված են այդ աշխատություններում։

Մեր պատմական շրջանի դրական լեզվի շարահյուսությանը նվիրված գործերից ամենաուշագրավը և համեմատաբար ծավալունը պրոֆ. Հ. Կուսիկյանի «Ակնարկ հայոց գրական լեզվի պատմական շարահյուսության» աշխատությունն է¹։ Սակայն ցավելով պետք է արձանագրել, որ այդ անվանի բանասերը ևս նախադասությունների շարադասության ու կառուցվածքի և նախադասության անդամների կապակցությունների հարցերը քննելուց այն կողմ չի անցնում և շարահյուսության հետ սերտորեն առնչվող կետադրությունը միանգամայն անտեսում է։

Կետադրության հարցերը սերտորեն կապված են շարահյուսության հետ, ուստի այս հարցում մեզ կարող էին օգնության գալ գրաբարի ուսուցման նպատակով կազմված դասագրքերն ու ձեռնարկները, սակայն այդ դասագրքերում ու ձեռնարկներում առ այժմ շարադրված են ձևաբանության հարցերը, իսկ շարահյուսությունը մնում է չուսումնասիրված։

Կետադրության հարցի վերաբերյալ մինչև այժմ չկա մենագրական որևէ ամփոփ աշխատություն։ Գրաբարի և միջին հայերենի կետադրության վերաբերյալ ուսումնասիրության բացը ինքնին թերագնահատություն է։

Թեև աշխարհաբարի շրջանի վերաբերյալ նույնպես մենագրական աշխատություններ չկան, սակայն այս շրջանի հայ բանասերներն ու քերականության դասագրքեր կազմողները բավական մանրամասնորեն անդրադարձել են կետադրության հարցերին։

Հիշատակության արժանի են անվանի բանասեր Ա. Այսրեյանի², Ս. Պալասանյանի³, ակադեմիկոս հայագետ Մ. Աբելյանի⁴, դոկտոր-պրոֆեսոր Գ. Սևակի⁵ և այլոց աշխատությունները, որոնց մեջ հեղինակները շարադրել են հայոց լեզվի մեջ գործածվող կետադրական նշանները

¹ П. К. Кусян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Москва, 1959.

² Հ. Ա. Այսրեյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866:

³ Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874:

⁴ Մ. Աբելյան, Աշխարհաբարի քերականություն, դասագիրք ստորին դասարանների համար, Վաղարշապատ, 1906 և Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912:

⁵ Գ. Սևակ, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, 1959:

մեծ մասը: Այս տեսակետից աշխարհաբարի շրջանը, գրաբարի համեմատությամբ, անհամեմատ ավելի բարձր վիճակում է գտնվում, չնայած այս շրջանում էլ դեռևս կան գրավոր խոսքի մեջ գործածվող, սակայն քերականական ձևերակերպից կամ աշխատություններից դուրս մնացած կետադրական նշաններ, կետադրական որոշ նշանների գործածության տարատեսակություններ, վիճելի տեղեր և այլն:

Նման պայմաններում մեզ համար, իհարկե, դժվար կլիներ տալ այս հարցի ամբողջական ու սպառիչ պատասխան: Սակայն, որպես աղբյուր օգտագործելով մեզ հասած հարուստ գրականությունը (վիճագիր արձանագրություններ, ձևագիր մատյաններ և տպագիր գրքեր), մենք կաշխատենք մեր ուժերի և կարողությունների ներածին չափ տալ անցյալում հայ գրավոր խոսքի մեջ գործածված կետադրությունը, որպեսզի հսկանալի լինի նրա զարգացումը, փոփոխությունները և հետագա կատարելագործումը:

* * *

Գրի ծագման օրից գրավոր խոսքը բանավորին համընթաց ծառայել ու ծառայում է մարդկությունը որպես հաղորդակցման կարևոր միջոց: Սակայն գրավոր խոսքը նույն ճշտությամբ չի փոխադրվում բանավոր խոսքին, որը լեզվաբաններից շատերն անվանում են նաև կենդանի խոսք: Բանավոր խոսքի ժամանակ մարդ օգտագործում է իր արտասանական ապարատի բոլոր հնարավորությունները. դեմքի մկանուններ (դիմախաղ), ձայնի ելևէջը, մարմնի գանազան մասերի շարժումները և խոսակցի կամ ունկնդիրների համար իր խոսքը դարձնում է հասկանալի ու ներգործուն: Այդպես չէ գրավոր խոսքի վիճակը: Գրավոր խոսքը բանավորին մոտեցնելու, այն արտահայտիչ ու կենդանի դարձնելու համար մարդիկ որոնեցին և գտան այդ թերին լրացնելու միջոցը՝ կետադրական նշանները:

Կետադրությունը գրավոր խոսքի շունչն ու ոգին է, առանց կետադրության գրավոր խոսքը չէր ունենա բանավոր խոսքի թովչանքը և կենդանությունը: Ինչպես բոլոր լեզուների, այնպես էլ հայոց լեզվի կետադրությունը կապված է նրա զրական, համաժողովրդական լեզվի հետ: Ուրեմն, լեզվի կետադրությունը նրա համար է, որ կարգավորի գրավոր խոսքը. նշի նրա դադարները, արտահայտի խոսողի հոգեկան ուրախ կամ տխուր վիճակների դանազան դրսևորումները, տրամադրության բազմազան ու բազմապիսի թրթռները, մտքի երանգավորումները, բառերին տա որոշ, խոսողի համար ցանկալի իմաստն ու մեկնությունը. կարդացողի համար դարձնի պարզ ու հասկանալի և մոտավոր ճշտությամբ մոտեցնի բանավոր խոսքի արտահայտչականությանը:

Մեր կետադրությունը ինչպես սկզբնական շրջանում, այնպես էլ հետագայում չի ունեցել այն պատկերը, ինչ գոյություն ունի արդի հայերենում: Կետադրությունը լեզվի զարգացմանը զուգընթաց ճշգրտվել, լրացվել ու կատարելագործվել է: Քանի որ կետադրությունը գերազանցապես կապված է լեզվի, նրա քերականական կառուցվածքի (առանձնապես, շարահյուսության, իսկ մասամբ նաև ձևաբանության) և բառակազմության հետ, ուրեմն կետադրության պատմությունը մասին խոսել, այդ նշանակում է խոսել հայոց լեզվի գրավոր շրջանի պատմության մասին:

Սակայն պետք է ասել, որ հայերենը որպես բանավոր լեզու հարյուրամյակների ընթացքում հղկվել, կոկվել, կատարելագործվել և դարձել էր հետագա գրավոր խոսքի հիմքը: Հայ պետականության վերացումը մեծ վտանգ էր սպառնում հայ ժողովրդի գոյությանը, արտաքին նվաճող ուժերը պատրաստ էին հայ ժողովրդին ձուլել իրենց: Այս տագնապալի օրերին ահա դրվում է հայ ժողովրդի ինքնությունության պահպանման զենքը՝ լեզուն պահելու և հարատև դարձնելու խնդիրը, իսկ նա բանավոր էր, ուստի և մեծ խոչընդոտներ էր հարուցում այս ուղղությամբ: Մեծ ու լարված մաքառումներից հետո գտնվեց ելքը: Մեր թվականության V դարի վերջերին ստեղծվեց հայատառ գիրը, և բանավոր մշակման երկար ու դժվարին ճանապարհ անցած հայ էթնիկական լեզուն գրի առնվեց: Այս պատմական, կուլտուրական ու քաղաքական մեծ իրադարձությամբ սկսվում է հայատառ ու հայաբառ գրականության պատմությունը: Այսպիսով, հայ լեզուն ոչ միայն փրկվում է կորստից, այլև դառնում է քաղաքական բերումով ցիրուցան եղած հայերի շաղախը և մայրառման ճանապարհին նրանց պաշտպանական հզոր զենքը:

Հայ գրերի գյուտի պատմությամբ էլ սկսվում է հայերենի քերականության, ապա նաև նրա կետադրության պատմությունը, որն ունի 1500 տարվա մի պատկանելի հասակ:

Հայկական տառերի հորինումով բացվում են հայրենի գրականության զարգացման նոր ու լուսավոր հորիզոններ: Մ. Մաշտոցն ու իր գինակիյները ծավալում են մայրենի լեզվի ու դրականության ուսուցման գործը: Թարգմանական գրականությանը զուգընթաց սկսում է ծաղ-

կել նաև ինքնուրույն ստեղծագործական գրականությունը՝ պատմագրությունը, բանաստեղծությունը, փիլիսոփայությունը, բնական և այլ գիտությունները։ Նման հանդամանքները հրամայաբար առաջ են քաշում ոճերի, ուղղագրության, շարահյուսության և այլ հարցերի միասնության ու կարգավորման պահանջը։ Իսկ այս ամենի հետևանքով պահանջ է դրացվում նաև գրի տոները, հանրագումարի բերել, ճշգրտել, սխառմի տակ գնել լեզվի օրինաչափությունները և նրա համար ստեղծել գրավոր կանոններ։ Նախամենարույան շրջանում մենք չենք ունեցել բերականական տերմիններ, որպիսիք ունեցել են գրի առնված և բոլոր փորձաշրջան անցած լեզուները։ Ուստի հայերը, գրերի գյուտից անմիջապես հետո, կրոնական ու դավանաբանական բաղմաթիվ գրքերի հետ միասին թարգմանում են նաև հույն բերական 'Իոնիսիոս Թրակացու բերականության գիրքը, սակայն շատրկանալով նրան։ Հայ բերականները հետագայում սկսում են մեկնաբանել հույն բերականի աշխատությունը՝ լրացնելով, փոփոխելով և մեր լեզվի ներքին օրինաչափությունների ոգուց բխող ճշգրտումներ մտցնելով նրա հետագա մեկնաբանությունների մեջ, միաժամանակ ստեղծում են հայերենի բերականական տերմիններ։

Այսպիսով, հայ գրավոր լեզվի հարստացմանը դուզենթաց ստեղծվում է և գրավոր բերականությունը, կամ, ճիշտն ասած, լեզվի օրենքների մշակված և ճշգրտված համակարգը արձանագրվում է գրով ու տերմիններով։ Ինչպես նոր լեզու չի ստեղծվում, այնպես էլ նոր բերականություն չէր կարող ստեղծվել, բերականությունը լեզվի հետ ծնվող, զարգացող, կարգավորվող և հաստատուն դարձող ընդհանրությունների հանրագումարն է։ «Լեզուների ընդհանուր փորձից հայտնի է, — գրում է ակադեմիկոս Հր. Աճառյանը, — որ բերականություն ստեղծել անկարելի է. այդ հողի վրա անհատական ջանքերը արժեք չունեն. նրանք միշտ էլ բախվել են ժողովրդի կամ հանրության ժալո անտարբերության և ուշ կամ կանույն ջնջվել են»¹։

Հայերեն լեզվի բերականական կառուցվածքը, իհարկե, ժամանակի ընթացքում, թեև դանդաղ, այնուամենայնիվ ճշգրտվել, լրացվել և աստիճանաբար կատարելագործվել է։

Բավական շատ է զբաղաբեր և հետագա շրջանի բերականների թիվը, որոնք մեզ թույլ են հարուստ ժառանգություն։

Կետադրության խնդիրները հին բերականների ձևագիր աշխատություններում պատշաճ տեղ են գրավել։ Բոլոր հին բերականները, գրեթե առանց բացառության, կետադրությանը հատկացրել են առանձին գլուխներ՝ «Յաղագս կիտի», «Յաղագս առողանութեան», «Յաղագս վերծանութեան», «Յաղագս ոլորակի», սակայն բառի իսկական իմաստով կետադրության հարցերը շարադրված են «Յաղագս կիտի» և «Յաղագս առողանութեան» գլուխներում։

Արդ՝ ծանոթանանք այդ ժառանգությանը։

* * *

Լեզվի մեջ տեղի ունեցող կարգավորումներից մեկը նախադասության կամ մեր նախորդների արտահայտությամբ՝ «բան»-ի գրանցումն է, նրա մեջ սահմանվող դադարներն են, որոնք արտահայտվում են համապատասխան կետադրությամբ։ Պետք է ասել, որ մեր նախնիները բավական պարզ ու հստակ պատկերացում են ունեցել խոսքի ու նրա մազերի փոխհարաբերությունների և խոսքի դերի ու նշանակության մասին։ Ինչպես այժմ, անցյալում ևս կետադրությունը կապվել է շարահյուսության հետ, խորախմբել նրա վրա։ Թե որքան մեծ արժեք են տվել նախադասության մեջ կետադրությանը, երևում է բերականական ձևագիր աշխատություններում եղած ձևակերպումներից։ «Ընկնութիւն բերականի» աշխատության մեջ կետադրության հարցին անդրադառնալով՝ 'Իավիթ Քերականը (V դար) գրում է. «Իսկ ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք, այսինքն, յորոշելոյ զբանսն և զատանելոյ։ Իսկ ոչ ուղիղ տրոհելն ըստ շար խոհակերի զանդամսն ոչ ուղիղ յաշել, որ է զմիտսն ի մտաց և զբանն ի բանէ ոչ զատուցանել. եւ պարունակեալն ի նմա անյայտացաւ միտք, զի ի խողէն զանխլացոյց և ինքն անարուեստ ցուցաւ»²։

Ինչպես նկատում ենք, 'Իավիթ Քերականն առհասարակ խոսքի և նրա փոքր միավորի՝ նախադասության տրոհման հարցը դնում է գործնական հողի վրա։ Մտքերը գրավոր արտահայտվում են նրա համար, որ ընթերցողները հասկանան, իսկ երբ բարդ նախադասությունները կետադրությամբ չեն տրոհվում, նրա առանձին բաղադրիչ նախադասությունները կամ նախադասության առանձին անդամները չեն զատվում միմյանցից, ապա ընթերցողը ոչ միայն կարող է

¹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. II, Երևան, 1951, էջ 164։

² Н. А д о н ц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб, 1915, էջ 88։

հեղինակին ճիշտ չհասկանալ, այլև աղավաղել նրա մտքերը: Ճիշտ ու մեկին գրել, կանոնավոր տրոհել «բան ի բան», նշանակում է ճիշտ հաղորդել իր մտքերը և այն բնթերցողին հասկանալի դարձնել:

«Տրոհություն ասլ զփեռեկումն և զորոշումն բանիցն, և տանց յբնթերցողութեանն. ոչ բնդ միմեանս շաղախելով, զայլևայլ խորհուրդան», — գրում է հետագա շրջանի բերականներից մեկ ուրիշը¹: Խոսողի կամ գրողի արտահայտած մտքերը նրա «խորհուրդներն» են, որոնք պետք է հասկանալի դառնան ունկնդիրների կամ բնթերցողների համար, այլապես միմյանց «շաղախվելով», կաղավաղեն միմյուր, մարդիկ իրար չեն հասկանա, որի հետևանքով էլ նրանց միջև շփումը և հարաբերությունը անհնար կլինի:

Դիտնիսիոս Թրակացու վաղ շրջանի հայ մեկնիչները (V—VII դդ.) կետադրություն ասելով հասկանում էին երեք կետ՝ վերջակետ, որ կոչվել է «կետ ավարտեալ», միջակ, որ այժմյան հասկացությամբ միջակետն է, և ստորակետ: Իյս առթիվ բերական Ստեփանոս Սյունեցին (VIII դ.) գրում է. «Իս ասելն եթև կետք են երեք, կետ ավարտեալ, միջակ, ստորակետ. վասն տրոհութեանցն ասլ,— ասլա շարունակում է,— իսկ ստորակետ ասլ զսկիզբն բանին, զառաջին տունն, իսկ միջակ՝ զմիջինն. իսկ ավարտեալ՝ զկատարումն խորհրդոյն և վերջին տուն՝ զկատարումն ենթադատութեան»²: Իյս դասակարգումը ավանդաբար շարունակվել է նաև հետագա բերականների մոտ, բնդհուպ մինչև XIX դարը:

Ա. ՎԵՐՋԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կրկնակետը, որպես վերջակետ, չի երևում ոչ բերականական աշխատություններում և ո՛չ էլ ձեռագրերում մինչև տասներորդ դարը: Ուշագրավ է, որ ռուսական վաղ շրջանի ձեռագրերում (XIV դ.) կրկնակետը հանդես է եկել կետի (վերջակետի) իմաստով: Իյգ մասին ռուս սլավոգրաֆներից մեկը գրում է.

«Հնագույն շրջանի որոշ ձեռագրերում հանդիպում ենք նաև միասին գործածված երկու կետերի, որոնք, սակայն, գրվել են վերջակետի (մի կետի) նշանակությամբ»³:

Վերջակետը հին ձեռագրերում (V—IX դդ.) այժմյան հասկացությամբ ոչ թե կրկնակետով (:) էր դրվում, այլ մեկ կետով (·), որն այսօր միջակետ է կոչվում: Վերջակետն իր գործածության տեղով և մասամբ ձևով տարբերվել է «միջակ» կետից ու ստորակետից: Կետն առհասարակ ունեցել է քառակուսի, երբեմն էլ քառանկյունի ձև: Վերջակետի իմաստով գործածվելիս այն դրվել է տողից վերև, իսկ միջակետի և ստորակետի իմաստով՝ տողի վրա:

Վերջակետը (կետ ավարտյալ) գրվել է պարզ և բարդ նախադասությունների վերջում և համարվել է խոսքի (նախադասության, որը երբեմն բազմաբարդ է եղել) ավարտման, վերջական դադարի, կամ, ինչպես հին բերականներն էին ասում, «խորհրդի» վախճանը: Ստեփանոս Սյունեցին (VIII դ.) այդ միտքն այսպես է ձևակերպում. «Իսկ ասելն եթև կետ է տրամախոհութեան անդեցելոյ նշան. զայս պարտեալ կիտն ասլ, զվախճան ենթադատութեան»⁴:

Համամ Արևելցին վերջակետը որպես ավարտյալ կետ բնորոշելիս, հիմք է բնդունում նախադասության չափն ու խորհուրդը, այսինքն՝ երբ այն մի ամբողջական միտք է արտահայտում. «ստարտեալ է, յորժամ չափովքն ու խորհրդովքն աւարտի»: Հեղինակի բերած օրինակը միանգամայն պարզում է մեր ասածը. «Պատգոս ծառայ յիսուսի բրիստոսի կոչեցեալ առաքեալ»⁵:

Եթե այս սահմանումը արդի բնորոշմամբ ձևակերպենք, ապա կարող ենք ասել՝ բառերով արտահայտված ամբողջ յուրաքանչյուր միտք կոչվում է նախադասություն. նախադասություն վերջում դրվում է ավարտյալ կետ, դադար տալու համար: Դավիթ Քերականը, Լևոնտուն մեկնիչը և հետագա այլ բերականներ (օր., Վարդան Արևելցին) ավարտյալ կետը (վերջակետ) համարել են «արբա», իսկ մյուս երկուսը՝ «սպասավոր» կամ «ծառա»: Ստեփանոս Սյունեցին (VIII դ.) ստորակետը համարում է «նախերգան», միջակը (միջակետը)՝ «պատճառ», իսկ ավարտյալը (վերջակետը)՝ «խոստումն» կամ «վախճան»⁶: Իյգ մասին ահա թե ինչ են գրում բերականները:

¹ Հայկական ՍՍԽ Մատենադարան, ձեռ. № 2329, էջ 64ր:

² Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 197:

³ Ф. Карский. Славяно-Кирилловская палеография, Ленинград, 1928, էջ 224—225:

⁴ Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 197:

⁵ Նույն տեղում, էջ 253:

⁶ Նույն տեղում, էջ 91, 130, 198:

«Զի կատարման կետն եղ որպէս զթագավոր և զայսն որպէս զարքայից ծառայս և սպասաւորս»¹։

Այս նույն ձևագրում վերջակետը համարվել է նաև «վճար և հանգիստ բանին»։

Եւայի նշեցին վերջակետը համարում է ավարտյալ կետ, սակայն ավելացնում է. «Որ նոյն ինքն ասի և տուն»²։

Այսպիսով, նախադասության («բան»-ի) հասկացությունը, ըստ հին քերականների, միանգամայն պարզ է. նա ցույց է տալիս մտքի վախճանը, այդ կետի վրա կարդացողը դադար է տալիս, հանգստանում, շունչ է առնում թրստ արինի ճանապարհորդաց, որ նստին և հանգիստ առնուն»³։ Ուրեմն նախադասությունը համարելով մտքի խորհրդի ավարտման միավոր, միաժամանակ անվանվել է տուն, ողջ կառուցվածքի մի մասը։

Այս ամենը, սակայն, ձևակերպված է քերականների աշխատություններում, իսկ մնացած՝ կրոնական և այլ բնույթի ձևագրերում ինչ վիճակի մեջ է եղել կետադրությունը։ Ամենահին հայերեն գրավոր վավերագրերը, որ մեզ են հասել, վիճագիր արձանագրություններն են։ Ամենավաղ շրջանի արձանագրություններից հայտնի են Տեկորի, Կրուսաղեմի (VI դ.), Թալինի, Մաստաբայի (VII դ.), Կեշառույրի (XI դ.) արձանագրությունները, որոնք, դժբախտաբար, այնքան աղքատ են կետադրության գործածության հարցում, որ դժվար է դրանց վրա հենվելով որևէ որոշակի կարծիք հայտնել այս խնդրի վերաբերյալ։ Փոքրիկ բարի վրա պետք էր տեղավորել բառերի մեծ քանակություն։ Բայց սա արդեն շատ դժվար գործ էր բերելու տեխնիկան, նյութը, որի վրա գրվում է և ժամանակն ստիպել են գրիչներին կատարել խնայողություն՝ կրճատել ինչպես տառերը, այնպես էլ կետերը։ Այս է պատճառը, որ մեզ հասած վաղագույն շրջանի գրավոր վկայությունները՝ վիճագիր արձանագրությունները, համարյա թե կետադրություն չունեն։ Այդ արձանագրություններում գործածվել են միջակետը, կրկնակետերը և պատիվ կոշվող նշանը։ Երկու կամ երեք կետերով տրոհված են թվական արժեքով գործածված տառերը։ Որպես նմուշ հիշատակենք Կեշառույրի արձանագրություններից (XI դ.) մի հատված։

«Տասն թուականութեան հայոց ի հայրապետութեան տեսուն գրիգորիսի և ի թագաւորութեան վրաց գաւրգէ և մերո իշխանին ևս հայր պետրոս և եղբայր իմ տէր յուսեփ ևս սարգիս կրանատոր ևս միաբան ուխտս հաստատեցաք տեսուն ստեփանոսի աղուանից կաթողիկոսի ի տարին գրիստոս ի տանի առաքելոց գաւթի. պետրոսի յոհաննու ամեն եկեղեցիս եթե որ խափանէ՛ ՅԺԸ՝ իցն նգովեալ եղիցի»⁴։

Ինչպես ցույց է տալիս այս մեջբերումը, տեքստը չի տրոհված այնպես, ինչպես ուսուցում էին հին քերականները։ Տեքստում «գաւթի» բառից հետո զրված է միջակետ, իսկ «պետրոսի» բառից հետո՝ վերջակետ։ Այս երկուսն էլ գործածվել են որպես բառատրոհիչ կետեր, այսինքն՝ որպես ստորակետ։ Ինչպես նկատում ենք, գրիչը խախտել է միասնությունը և միևնույն ղեպի համար գործածել է տարբեր կետեր։ ՅԺԸ տառերի սկզբից և վերջից զրվող կետերը թվական արժեքով գործածվող տառերը տրոհել են տեքստի մյուս բառերից։ Վերջում զրված երկու կետն արդեն գործածվել է ճիշտ իմաստով՝ վերջակետի իմաստով։

Ուսումնասիրողները նգիպտոսում գտել են հայատառ հունարենով գրված պապիրոսի մի պատառիկ։ Պատառիկը համարվում է VIII դարի գրավոր վավերագիր։ Ելանակում է նա առայժմ եղածներից ամենահնագույն ձևագրին է։

Այդ պատառիկի ուսումնասիրությունը Հ. Տաշյանին բերել է այն համոզման, որ «Պարզ կետ, ստորակետ, բութ և այլն չենք գտներ ամենեկին։ Առհասարակ գործածվածն է երկու կետ կամ՝ մեր «վերջակետ»(ւ) կոչածը։ Անշուշտ նույն վերջակետի կամ կրկնակետի դիտմամբ՝ գծված կտնսնենք հաճախ տրոհության ուրիշ նշան մ'ալ, որ բոլորովին կնույնանա եվրոպացիների գրի զարմացական նշանին (!) հետք»⁵։

Բնական է, որ մայր երկրից դուրս գտնված ամենահնագույն ձևագիր պատառիկը, և այն էլ օտար լեզվի բառերով գրված, չէր կարող բնորոշ լինել իր կետադրությամբ և մեզ հիմք չի տալիս նրանով դատելու հայերենի կետադրության էության մասին։ Սակայն ուշագրավ է այն

¹ Հայկական ՍՍԽ Մատենադարան, ձեռ. № 2371, էջ 12ա։

² Նույն տեղում, ձեռ. № 2373, էջ 53բ։

³ Նույն տեղում, ձեռ. № 1115, էջ 127բ։

⁴ Նյութը մեզ տրամադրել է Բնկ. Ս. Իսրիսուղարյանն իր անտիսլ ուսումնասիրություններին։

⁵ Հ. Տաշյան, Արևարկ մր հայ հնագրություն վրա, Վիեննա, 1898, էջ 100։

հանգամանքը, որ այդ ձեռագիր-պատառիկում չկան միջակետը, ստորակետը և բութը, ինչ վերաբերում է կրկնակետին, որը որոշ տեղեր նմանվում է արդի եվրոպական լեզուների զարմացական նշանին, մեր կարծիքով, այդ բանը պետք է վերագրել ձեռագիրն ընդօրինակող գրչին. գրողն անփութ է եղել և կետի ծայրը երկարացրել է. որի պատճառով էլ եվրոպական արդի զարմացական նշանի ձևն է ստացել: Այս բանը եվրոպականի ազդեցությամբ բացատրել չենք կարող (և Հ. Տաշյանն էլ այդ չի ակնարկում), բանի որ այդ լեզուների վաղ շրջանի գրություններում զարմացական նշանի գործածությունը գոյություն չի ունեցել: Այդ մասին է վկայում ռուս բանասեր Վ. Կլասովսկին, որն զբաղվել է եվրոպական հինգ լեզուների կետադրական նշանների ուսումնասիրությամբ: Նա իր աշխատության մեջ գրում է. «Բացականչական նշանը և չակերտները հորինվել են ավելի ուշ շրջանում, XVII դարի վերջերին»¹:

Հետագա երկու դարերի (VII—VIII) մեզ հասած ժառանգությունը դարձյալ վիճագիր արձանագրություններն են, որոնք, ինչպես ասացինք, կետադրության հարցում մեզ ոչնչով օգնել չեն կարող:

Իր ժամանակին գոյություն ունեցած բազմազան բնույթի շատ արձանագրությունների և գրավոր այլ կոթողների բացակայության հետևանքով հնարավոր չէ որևէ դրական բան ասել V—VIII դարերի գրավոր խոսքի, հետևապես և կետադրության մասին. ինչպես տեսանք, այդ ժամանակաշրջանի կետադրության մասին գոյություն ունեն միայն Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչների ժլատ հաղորդումները:

Ամենահնագույն ձեռագիրը, որ հասել է մեզ, Վանանդի (Հազարյան ճեմարանի) ավետարանն է, գրված 887 թվականին: Այս ձեռագիր ավետարանում կետադրության կիրառումն արդեն նյութեղեն փաստ է, ունի գործնական նշանակություն և ոչ թե տեսական, ինչպես վաղ շրջանի քերականների գրչագրերում եղածը: Այն, ինչ կա այստեղ, ժամանակի ճշգրիտ պատկերն է տալիս: Այս ձեռագրում, հակառակ քերականների տեսական շարադրանքի, գործածվել է միայն մի կետ և պատիվ կոչված նշանը: Այդ կետը, իհարկե, իր գործածությամբ ունեցել է տարբեր իմաստ և նշանակություն՝ նայած թե ինչ տրոհական դեր է կատարել: Այս ձեռագրում կետն ունի քառակուսի, երբեմն քառանկյունի, երբեմն էլ թավ ստորակետի ձև: Տողից վեր դրվելիս այն համարվել է վերջակետ, իսկ տողի վրա, նայած նրա արտահայտած իմաստին, մերթ որպես միջակետ, մերթ որպես ստորակետ (տե՛ս տախտակ № 1):

Հազարյան ճեմարանի ավետարանում յուրաքանչյուր նախադասություն, որ երբեմն ոչ ծավալուն մի պարբերություն է, սկսվում է գլխագրով, իսկ նախադասության մեջ հատուկ գոյականներն անգամ գրվում են փոքրատառերով: Նախադասության ավարտումով ընդմիջվում է խոսքը, գրվում վերջակետ և հաջորդ նախադասությունն անպայման սկսվում է նոր տողից և գլխատառով:

Սակայն երբեմն դժվար է լինում ձեռագրում գործածված կետերի ձևով որոշել նրանց դերն ու նշանակությունը: Հաճախ այդ կետերը իրար նման են կամ տարբեր: Բացի այս, պետք է նկատի ունենալ և այն, որ գրիչներն իրենք երբեմն խախտել են կանոնը կամ չիմանալու պատճառով, կամ հոգնածության և անփութության հետևանքով: Բերենք մի օրինակ, ապացուցելու համար, որ երբեմն ըստ կետերի ձևի և տեղի դժվար է դատել նախադասության կետադրության մասին:

Վասն այսորիկ նմա

նեռաւ արքայութի

ուն երկնից առն թա

գաւորի՝ որ կամե

ցաւ համար առնել

ի մէջ ծառայից իւր

(տե՛ս տախտակ № 1):

Ինչպես նկատում ենք, այս օրինակում վերջակետն ու ստորակետը ձևով և գործածության տեղով միմյանց այնքան նման են, որ դժվար է դրանք իրարից տարբերել: Ելնելով նախադասության շարադասությունից՝ պետք է ասել, որ քաղաութի բառից հետո գործածված կետը պետք

¹ В. К л а с с о в с к и й, Знаки препинания в пяти важнейших языках, СПб, 1882, էջ 3—4:

² Հազարյան ավետարան, էջ 40:

է համարել ստորակետ, որովհետեւ այն տրոհում է ու ստորադասական շաղկապով սկսվող ետադաս երկրորդական նախադասությունը գլխավորից, իսկ վերջում դրված կետը՝ վերջակետ, կամ ինչպես քերականներն էին ասում, «կետ ավարտեալ», որովհետեւ այստեղ միտքն ավարտվում է, և գրիչը, ըստ կանոնի, հաջորդ նախադասությունն սկսում է նոր տողից և գլխագրով, նախադասության կազմությունն էլ հենց այդ է ապացուցում: Մեր կարծիքով այս անկանոնությունը պետք է բացատրել նրանով, որ ուղղագրության և կետադրության հարցերում չկար միասնական պահանջ, դպրոցական ուսուցումը համաժողովրդական բնույթ չէր կրում, վանքերի խուցերում գործող սահմանափակ դպրոցները միմյանցից կտրված էին և գործում էին անկախորեն: Սրան պետք է ավելացնել նաև այն, որ գրիչներից մի մասը կիսագրագետ մարդիկ էին, սոսկ արհեստավորներ, իսկ գրագետներն էլ ցուցաբերում էին իրենց անհատական մոտեցումը: Չկար տպագրություն, ամբողջ աշխատանքը կատարվում էր ձեռքով և այն էլ շատ հաճախ խիստ աննպաստ պայմաններում:

Բնական է, որ նման պայմաններում և՛ հոգնությունը, և՛ կրթության պակասը, և՛ մեխանիկական արտագրությունը, և՛ աննպաստ պայմանները (արշավանքներ, գաղթ) պատճառ են դարձել շատ թերությունների՝ Դիտելով մեր հին ձեռագրերը՝ նկատում ենք մերթ գեղեցիկ, կանոնավոր, մերթ տգեղ ու տձև գրություն, բացթողումներ, լուսանցքներում և բառերի գլխին կատարված ավելացումներ, միևնույն տառի տարբեր ձևավորումներ և այլն: Այս հանգամանքն առավել զգալի է տարբեր տարիների ու դարերի գրություններում:

Ահա այս նույն պատճառները գեր են խաղացել և կետադրության գործում: Ոչ միայն տարբեր ձեռագրերում չեն պահպանվել կետերի չափն ու ձևը, այլև միևնույն ձեռագրում էլ շատ հաճախ կետերը տարբեր չափ ու ձև ունեն: Լինում են դեպքեր, երբ միջակետն ու վերջակետը փոխանակ քառակուսի կամ քառանկյունի ձև ունենալու նմանվում են հաստ գլխիկով ստորակետի կամ վերևից դեպի աջ մի սուր մագագիծ է ավելանում նրա վրա: Այս բոլոր դեպքերում որոշիչը, իհարկե, մնում է նախադասության կազմությունը, նրա շարադասությունը, որով պետք է պարզել, թե տվյալ կետը որպես միջակետ է գործածվել, թե որպես վերջակետ:

Սկսած X դարից, գրիչների մեծ մասն արդեն որպես վերջակետ (կետ ավարտեալ) գործ է ածում կրկնակետը (։), որ նման է այսօրվա վերջակետին թե՛ իր ձևով և թե՛ իր արտահայտչական նշանակությամբ: Վերջակետն այս դարից արդեն դրվում է տողի վրա, սակայն որոշ ձեռագրերում այն երբեմն հանդես է գալիս քառանկյունի գծերի ձևով (տե՛ս տախտակ N° 1):

Վերջակետի գործածությունը, այսօրվա նման երկու կետով, ավելի կանոնավոր, հաստատուն ու համատարած է դառնում XI—XII դարերից սկսած²: Սրանից հետո երկու կետով վերջակետի գործածությունը քաղաքացիություն է ստանում և շարունակվում մինչև մեր օրերը:

XI դարի որոշ ձեռագրերում³ որպես տրոհման կետ (երբեմն վերջակետի, երբեմն էլ միջակետի իմաստով) գործածվել է մեկ կետը ստորակետի հետ միասին, ուղղահայաց դրությամբ, իրար տակ դրված վիճակով (։), իսկ 930 թվականի մի ձեռագրում⁴ վերջակետից հետո ավելացված է մի ալիքաձև գիծ՝ հորիզոնական դիրքով (։~) (տե՛ս տախտակ N° 2):

Միջակետը և ստորակետը միասին որպես տրոհման նշան հայ հետագա գրագրերում այլևս չենք հանդիպում, մինչդեռ եվրոպական մի շարք լեզուներում, ինչպես և ռուսերենում, նա հետագայում մուտք է գործում զրավոր խոսքի մեջ. միջակետի և ստորակետի համատեղ գործածությունը այժմ էլ շարունակվում է այդ լեզուներում: Օրինակ՝ իտալերենում կետ և ստորակետ գրվում է երբեմն վերջակետի իմաստով, երբեմն էլ բարդ նախադասության առանձին պարբերությունները միմյանցից տրոհելու համար⁵: Ռուսաց լեզվում կետ և ստորակետը միասին, որպես մի կետադրական նշան, գրվում է տրոհելու համար բարդ նախադասության առանձին մասերը և իրեն օրինակ բերվող ու թվարկության կարգով գրվող բառերը, ինչպես նաև նախադասության բազմակի լրացումները:

Սակայն պետք է ասել, որ միասնական գրական լեզվի, բոլորի համար դպրոցների միջոցով պարտադիր դարձած քերականության և պետական հսկող ձեռքի բացակայության հետևանքով

¹ Տե՛ս «Շողակաթ», Էջմիածին, 1913:

² Նույն տեղում, տախտակ № 11.

³ Նույն տեղում, տախտակ ԻԴ:

⁴ Նույն տեղում, տախտակ ԻԽ:

⁵ Պոդոլյան, Վերականգնողական իտալական լեզվի, Վիեննա, 1836:

⁶ „Правила русской орфографии и пунктуации“, Москва, 1956.

Քերված օրինակները հաստատում են մեր ասածները: Նրկու կետով վերջակետի գործածության միասնությունը ևս երբեմն տարբեր ձևազարկում և տարբեր դարերում խախտվել է. կան ձևազարկ, որոնցում երբեմն վերջակետի փոխարեն գործածվել է երեք կետ, երբեմն երեք կետ և գծիկ, կամ երկու կետ ու գծիկ, երբեմն նույն նշանները մի քանի անգամ կրկնված, մանավանդ եթե այդ նախադասությամբ մի ամբողջ և որոշ շարժված անկախ պարբերություն կամ գլուխ է ավարտվում:

Խոսքի ավարտման դեպքում, դադարի իմաստով, գրվել են նաև երեք և չորս կետերը որպես վերջակետ (տե՛ս տախտակ N° 2):

Երեք կետով վերջակետի գործածության կապակցությամբ Հ. Տաշյանն այն կարծիքն է հայտնել, որ դա ասորականի ազդեցության հետևանք է: Նման միտք է արտահայտել նաև պրոֆ. Աշ. Աբրահամյանը: Ասորական հին գրչագրերում գործածված կետադրական նշանների հարցով դիմեցինք բանասիրական գիտությունների դոկտոր, ասորագետ, հարգելի Երվանդ Տեր-Մինասյանին: Նա մեզ հայտնեց, որ ասորական հնագույն գրչագրերում որպես վերջակետ գործածվել է չորս կետը: Այս փաստը հաստատվում է նաև ասորական ձևազարկի աղբյուրներով¹ (տե՛ս տախտակ N° 2):

Վերջապես, որպես վերջակետ գործածվել է չորս կետ, որից երեքը ներքևում իրար կողքի, իսկ մեկը դրանց վերևում (տե՛ս տախտակ N° 2):

Ըստ Հ. Տաշյանի սա խաչանիշի տեղ է ծառայել², նշած ուսումնասիրությունները մեզ բերում են այն համոզման, որ բազմաթիվ կետերի այլևայլ դասավորությամբ գործածությունը եղել է սովորական երևույթ, ուստի գծվար թե դրանք կամ դրանցից որևէ մի խումբը խաչանիշի սիմվոլ լինի. դա կամ գրիչների քմահաճ և կամայական վերաբերմունքի հետևանք է, կամ, եթե գրիչը գրագետ է եղել, ասորականի ազդեցության հետևանք:

Բ. Միջակետի գործածությունը

Միջակետը (միջակ) գրաբարի շրջանի բերականների մոտ և հայկական հին ձևազարկում գործածվել է որպես կետադրական (տրոհության) նշան, որը տրոհել է համադասական նախադասության առանձին պարզ նախադասությունները միմյանցից, ուղղակի խոսքը հեղինակի խոսքից և, գրվելով թվական արժեքով գործածվող տառերի աջ և ձախ կողմերում, դրանք առանձնացրել է տեքստի մյուս բաժերից: Սկզբում արդեն առել են, որ միջակետն ու ստորակետը բերականների կողմից համարվել են վերջակետի ծառան կամ սպասավոր:

Ստեփանոս Սյունեցին (VIII դ.) միջակետի մասին գրում է հետևյալը. «Իսկ միջակ (միջակետ — Հ. Մ.) նշան ոգի սակս ընդունելոյ. քանզի արդարև իսկ որպես ոգի ի սմա առնու ընթերցողն, ի կախ ունելով զձայնն և ոչ ի հանգիստ իջուցանելով, զի այս ի վախճանին եղեցի»³: Նույն Ստեփանոս Սյունեցին եթե վերջակետը (ավարտյալ) համարում է «խոստում» և «վճիռ», ապա միջակետը՝ «պատճառ»: Սյունեցու սահմանման մեջ ուշադրաժն այն է, որ նա նշում է միջակետի դադարի չափը: Ըստ Սյունեցու վերջակետի վրա ձայնը հանգիստ իջնում է, որովհետև «բան»-ի (նախադասության) վախճանն է, վերջը. իսկ միջակետի ժամանակ ձայնը պետք է կախ գցել, որովհետև նախադասությունը դեռ չի ավարտված, այլ նրա կիսով չափ անկախ մի մասն է միայն վերջանում: Այսպիսով, միջակետով տրոհվում են այն նախադասությունները կամ նախադասության այն մասերը, որոնք կիսանկախ միտք են արտահայտում, սակայն կապված են բարդ նախադասության ընդհանուր մտքի հետ:

Այդ միտքը, զրեթե նույնությամբ, կրկնել են հետագա դարերի բերականները: Քերականներից մեկը ընթերցողից պահանջում է միջակետի ժամանակ տեքստը կարդալ «ի կախ ունելով զձայնն և ոչ ի հանգիստ իջուցանելով, զի այս ի վախճանին եղեցի»⁴:

Համոզվելու համար բերենք օրինակներ.

ա) «Ծառայեցէր տեառն երկիւղի. և ցնծացէր առաջի նորա դողութեամբ»⁵:

¹ C. Brockelmann, Syrische grammatik, Leipzig, 1915.

² Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, Վիեննա, 1898, էջ 176:

³ Ն. Ադոնց, Նշվ. աշխ., էջ 197:

⁴ Հայկական ՍՍԽ Մատենադարան, ձև. N° 2273, էջ 53ր:

⁵ Նույն տեղում, ձև. N° 199, էջ 30:

Սա բարդ նախադասություն է, կազմված է «ծառայեցէ՛ք տեսո՞ն երկիրդ» և «ցնծացէ՛ր առաջի նորա դողութեամբ» երկու պարզ նախադասություններից: Այս երկու համագոր նախադասությունները միմյանցից տրոհվել են միջակետով, իսկ նրանց վերջում դրված է վերջակետ:

Միջակետը հին ձևագրերում գործածվել է նաև ուղղակի խոսքը հեղինակի խոսքից տրոհելու համար: Հին ձևագրերում ուղղակի խոսքը հեղինակի խոսքից տրոհվել է մի կետով և գրվել է առանց օժանդակ կետերի. օրինակ՝

Եւ մտեալ ի Կափառնաւմ. մատեաւ հարիւրապետ մի, աղաչէր
զնա եւ ասէր.

Տէ՛ր. մանուկ իմ անկեալ կ'սյ ի տան անդամալոյժ. չարաչար
տանջեալ.

Ասէ ցնա յիսուս. ես եկից եւ բժշկեցից զնա՛:

Այս օրինակում հեղինակի խոսքից հետո դրված կետը արդեն բառակուսի չէ, այլ մոտափորապես կտրու:

Մի այլ օրինակ.

Պատասխանի ետ նմա
պետրոս եւ ասէ, տէր.
Եթէ դու ես. հրամ
այլ ինձ գալ առ քեզ ի
վերայ քուրց,
Եւ նա ասէ. եկ,
Եւ իջեալ ի նաւէն սլետ
րոս. զնաց ի վերա
քուրցն եւ եկն առ
յիսուս,
(տե՛ս տախտակ N° 1):

Ի դեպ, ասենք, որ Հաղարյան ճեմարանի ավետարանի մի շարք էջերում յուրաքանչյուր սլարրերության և երկախոսության սկզբում (ծախ լուսանցքում) դրված է «պատիվ» կոչվող նշանը: Հավանաբար այս նշանը գործածվել է այն նպատակով, որ որոշակի դարձնի յուրաքանչյուր նոր խոսքը և երկախոսության յուրաքանչյուր առանձին մասը:

Հին գրչագրերում միջակետը գործածվել է նաև թվական արժեքով մեջ բերված տառերի աջ և ձախ կողմերում, այդ տառերը ակներախ դարձնելու, դրանց թվական արժեքը նշելու և խոսքի մյուս մասերից անջատելու համար: Օրինակ՝

ա) Քանզի. գ. եւկու եւ. և բ.գ. և բ. թիւն իգական է:
բ) Ի բազմացն .բ. միայն դնելով արինակս³:
«...յառաջին օրն կորուսանէ զլոյս աչացն.
և մնա կոյր գաւուրս երիս. և ապա գկնի .գ.
աւուրն վերստին տոնու զլոյս աչացն. և այս—
պէս բժշկի յամենայն ցավէ»: ⁴
«Ըստ այսմ ժամանակի որողինէս՝ գկնի առաքելոցն ի
վերայ ամենեցունց, բանիւ և վարուք
փայլեաց: Եւ իրրեւ լինէր ամաց .ԺԷ. այնչափ
հմուտ գոյր քերթողական և լոճիկա արհեստին
մինչ գի դպրատուն ուղղէր. և վարդապետ
նստելով գայլս ուսուցանէր⁵,
«Զկնի ջնջելոյն քրհեղեղին գաշխարհս, նոյ
րնդ այլ .է. տնձացն ապրելոյ»⁵:

¹ Հաղարյան ճեմարանի լուսատիպ ավետարան, էջ 18:

² Հաղարյան ճեմարանի ավետարան, էջ 31:

³ Հայկական ՈՍԻ Մատենադարան, ձեռ. № 2329, էջ 51ա:

⁴ Նույն տեղում, ձեռ. № 2037, էջ 17բ և 92ա:

⁵ Նույն տեղում, ձեռ. № 2038, էջ 3բ:

Ինչպես ուղղակի խոսքի, այնպես էլ թվական արժեքով գործածվող տառերի աջ և ձախ կողմերում դրվող միջակետի գործածությունը շարունակվում է մինչև տպագրության գյուտը և մասամբ էլ նրանից հետո, մինչև XVIII դարի վերջերը՝ Այս հարցում էլ եղել են խախտումներ, չատուկ անունների և թվական արժեքով գործածվող տառերի աջ և ձախ կողմերում, իսկ երբեմն էլ վերջում գրվել է ոչ թե միջակետ, այլ կրկնակետ. օրինակ՝

ա) Արինաուր հրամանաւ Մկ, որն ասաց՝ յամենայն ժամ աղաթս

արարէր (օրինավոր հրամանով Մկրտիչ տերն ասաց՝ ամենայն ժամ աղոթք արեալ, տե՛ս տախտակ N 4)։

բ) Ի թուականութեանս հայոց, Ուր։ Եւ ի տերութեան աթարակ և այլն։

գ) Ի թուականութեան հայոց, Չիէ։ Ի գեղարարարիս Կարփի...³

զ) Վթի, Գ, ՍԳ, Գ, (վրթանեսի երեք, սարգսի երեք և այլն)։

(Կեչաոխի գավթի արեւմտյան մուտքի կիսաբոլոր բարովարի վրաի արձանագրութիւնը)⁴։

է) Առողանութիւնը, սեռականը Եւ Ոլորակը Եւ ԳՏ.

Գ. Ստորակետի գործածությունը

Ստորակետը դրված է «Կետադրություն» բաժնում։ Ըստ հին քերականների, ստորակետը համարվել է բարդ նախադասությունների և նախադասության առանձին անդամները տրոհող կետ ու ճանաչվել է վերջինը իր դադարի փոքրությամբ։

Անանուն մեկնիչը ստորակետը բնորոշում է այսպես. «Եւ դնէ զկետն, որ կոչի ստորակետ, որ ունի տկարութիւն հանգման մտածողութեանն»։ Ուրեմն ստորակետը բնորոշելիս անցյալում հենվել են այն բանի վրա, որ նա չի կարող ցույց տալ մտածողության հանգումը, այսինքն՝ ստորակետով տրոհված առանձին անդամները կամ երկրորդական նախադասությունները առանձին վերցրած ամբողջական, ավարտուն միտք արտահայտել չեն կարող, ուստի Անանուն մեկնիչը նրա ուժը «տկար» է համարում։ Եվ իրոք, եթե վերջիններ սոսկ այն երկրորդական նախադասությունները կամ նախադասության այն անդամները, որոնք տրոհվում են ստորակետով և նախադասությունից դուրս դիտվեն, միանգամայն պարզ կլինի, որ դրանք առանձին վերցրած միտք չեն արտահայտի, կամ թերի կարտահայտեն։ Բացի այս, հին քերականները ստորակետը բնորոշելիս ելնում էին նաև նրա դադարի չափից, քանի որ ստորակետը նախադասության ավարտը չի ցույց տալիս, ուրեմն և նրա դադարին հասցնելուց դեռ շատ հեռու է։

Քերական Ստեփանոս Սյունեցին (VIII դ.) ստորակետը համարում է նախադասության մտքի ավարտման և դադարի նախերգանքը, իսկ հետագա քերականները (Ե. Նչեցին և ուրիշներ, XIII—XIV դդ.) ստորակետը չեն համարում «տրամախոհության հանգման» նշան, որովհետև նա «խորհուրդ» հայտնել չի կարող։ «Եւ ստորակետ տրամախոյն չի ևս յանկեցելոյ, այլ ևս կարաւտացելոյ նշան», գրում է քերականը։ Կամ «Ի յարտմանէ խորհրդոյն մեծ ունի միջին կետն յորմէ կարի յոյժ հեռի է ստորակետին բան վասն միջասահմանին՝ զի ինքն բնդ ինքեան ստորակետն ոչ կարէ յայտնել զխորհուրդն, քանզի յարարտեալ կետն հասնելով, ի կարգի շարամանն լինի բաց երևութիւն բանին։ Ստորակետն նախերգան է»⁵։ Նկատենք, որ հին քերականները փոխանակ նախադասության շարադասությամբ բացատրելու կետադրությունը, հակառակն էին անում։ Կետերը միայն կենդանի խոսքի կարգավորման սիմվոլները, նշաններն են, հետևապես նրանք պետք է մեկնաբանվեն նախադասության հիմքի վրա։

Մի այլ քերական գտնում է, որ ստորակետով տրոհված հատվածը միտք չի արտահայտում, այդ մասի իմաստն անհայտ է մնում։ Այս միտքն ապացուցելու համար նա որպես օրինակ բերում է մի նախադասություն, ահա այն.

¹ Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձեռ. № 1418, էջ 248ա։

² Նույն տեղում, ձեռ. № 2374, էջ 24ա։

³ «Շողակաթ», տախտակ 4ա.

⁴ Նյութը մեզ տրամադրել է հնագետ ընկ. Ս. Բարխուդարյանը իր անտիպ աշխատությունից։

⁵ Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձեռ. № 2373, էջ 15ր և 16ա։

⁶ Նույն տեղում, ձեռ. № 2373, էջ 53ա և 54բ։

«Իսկ ստորակետ է, որ բանն վասն որոյ է շայտնի:
որպէս որ ասեա ընդ մարդ թէ գնա, և չասես, թե ո՛ր և կամ ասես
թէ առ, և չայանես թէ զի՞նչ առնու»¹:

Հայկական ՍՍՌ Մատենադարանի մի այլ ձեռագրում բերված օրինակներն ավելի պարզորոշ են դարձնում ստորակետի դերը որպէս նախադասութեան անդամները տրոհող կետի: Օրինակ՝

- 1) «նախայարաշնչութիւն, անուն է, որ նախ երկուք յանգէն ունի
զուորակն, որպիսի՞ դիկդիկոն»:
 - 2) «Պարոյկ, անուն է, որ յանգէն ունի զպարոյկն, որպիսի՞»:
 - 3) «Յարապարոյկ անուն է, որ նախ եզով յանգէն ունի զպարոյկն որպիսի՞».
- պարզութեամբ²:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ ստորակետը դորձածվել է ստորադասական նախադասութիւնները գլխավորից բաժանելու համար: Բարդ նախադասութեան կազմութիւնը նկատի ունենալով՝ կարող ենք ասել, որ ստորակետով տրոհված երկրորդական նախադասութիւնները (որ նախ երկուք յանգէն ունի զուորակն, որ յանգէն ունի զուորակն, որ նախ եզով յանգէն ունի զպարոյկն), երբ առանձին ենք վերցնում, նրանք ինքնուրույնաբար, անկախ վիճակում չեն կարող լրիվ, ամբողջական միտք արտահայտել: Լսելով այդ նախադասութիւնները ունկնդիրը կամ կարգացողը լրիվ չի հասկանա գրվածքի կամ խոսքի միտքը: Այդ նախադասութիւնները միայն ու միայն գլխավորների հետ միասին մի ամբողջական նախադասութեան մեջ հասկանալի կլինեն: Որպեսզի այդ նախադասութիւնները միմյանց հետ շփոթվեն և հնարավոր լինի ճիշտ կարգաւ կամ արտասանել, ահա դրա համար դրանք տրոհում ենք ստորակետով: Հետևապէս, կարգաւ կամ արտասանելու ժամանակ այդ մասի վրա ձայնը լիովին չպետք է իջնի և դադար առնի, մի բան, որ արվում է միայն նախադասութեան ավարտման ժամանակ:

Ստորակետ դրվել է նախադասութեան բազմակի անդամների միջև, նրանք միմյանցից տրոհելու համար, օրինակ՝

«Եւ ի սոցանէ որք գիտեն դպրութիւն: Երբայցիք, լատինացիք, որով և հռոմք վարեն, սպանիացիք, յոյնք, մարք, հայք, աղուանք»³:

Ստորակետ դրվել է թվարկութիւնների դեպքում. թվարկվող բառիմաստները կամ նախադասութիւնները միմյանցից տրոհելու համար, օրինակ՝

ա) «Եւ վերձանելի է, ըստ էնթադատութեան, ըստ առողանութեանցն, ըստ տրոհութեան»⁴:

բ) «Եւ դազան զոր տեսի, նման ընծու, և ոտք նորա իբրև զարջու, և բերան նորա որպէս շառնուծու: Երբեմն ասաց՝ ինձ հելենացին, և արջ սլարսիկն, և առեւծ բարեկացին»⁵:

Ստորակետի մասին պրոֆ. Աշ. Աբրահամյանն այն կարծիքն է հայտնել, որ նա սկսել է դորձածվել XI դարից հետո, մինչդեռ մենք ասացինք, որ ստորակետի մասին քերականներն իրենց աշխատութիւններում հիշատակում են դեռևս V—VII դարերից սկսած: Բացի այս, Լազարյան ձեմարանի ավետարանում և Էջմիածնի հռչակավոր, փոքրակրակազմ ավետարանում (IX—X դդ.) մենք հանդիպում ենք ստորակետի դորձածութեան բազմաթիվ դեպքերի: Այս երկու ձեռագրերում, որ ամենից հինն են, ստորակետը ոչ միայն իր տրոհական ֆունկցիայով է տարբերվում միջակետից ու վերջակետից, ինչպես տեսանք սկզբում, այլև իր ձևով: Թե՛ Լազարյան ձեմարանի, թե՛ Էջմիածնի ավետարաններում կան բազմաթիվ Լջեր, որտեղ դորձածված ստորակետներն իրենց ձևով ամբողջովին նման են այսօրվա դորձածական ստորակետին (,)։ Լազարյան ձեմարանի ավետարանում այդ ձևի ստորակետերը թվով սահմանափակ են, իսկ Էջմիածնի ավետարանում նրանք բավական մեծ թիվ են կազմում: Համոզվելու համար դնում ենք երկու նմուշ այնպես, ինչպես կան ձեռագրերում:

¹ Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 1115, էջ 107բ:

² Նույն տեղում, ձեռ. № 2373, էջ 16ա:

³ Նույն տեղում, ձեռ. № 8057, էջ 6:

⁴ Նույն տեղում, ձեռ. № 2373, էջ 1բ:

⁵ Նույն տեղում, ձեռ. № 1418, էջ 72ա:

«Եւ ամենայն որ լսէ զբանս զիմ զայսոսիկ եւ ոչ առնէ զնոսա

նմանեսցէ առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի»¹։ Եթե մեզ առարկեն, որ գրիչների ձեռքի բմահաճ կա՞մ պատահական շարժման հետևանքով նույն հատվածի շարունակության մեջ «ի վերայ վիմի» բառերից հետո գրված կետը պետք է վերջակետ համարել, որովհետև ձևով նման է վերևի ստորակետին, մենք դրան կպատասխանենք՝ ստորակետը մենք ճանաչում ենք բոլոր նրա տրոհական ֆունկցիայի, չփախելով նաև նրա ձևը։ Բայց նախադասության կազմության և դրա հետևանքով էլ բոլոր կետերի ֆունկցիայի, բերված օրինակում նրանց իմաստը միանգամայն հասկանալի է։ Որպեսզի ընթերցողը համոզվի, բերում ենք ամբողջ հատվածը։

1. Եւ ամենայն որ լսէ զբանս զիմ զայսոսիկ եւ առնէ զնոսա նմանեսցէ առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի. իջին անձրեք. եւ խաղացին զետը. շնչեցին հողմը. եւ բախեցին զտունն. եւ ոչ կործանեցաւ քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր»։

2. «Եւ ամենայն որ լսէ զբանս զիմ զայսոսիկ եւ ոչ առնէ զնոսա նմանեսցէ առն յիմարի. որ շինեաց զտունն իւր ի վերայ աւագի... և այլն»։

Մենք արդեն ասել ենք, որ վերջակետը տարբերելը հեշտ է, որովհետև ամեն մի նախադասություն սկսվում է նոր տողից և գլխագրով։ Մեջբերված հատվածները նույն պարբերության երկու առանձին բարդ նախադասություններն են. առաջինը մեջ ենք բերել ամբողջությամբ, իսկ երկրորդը՝ կիսատ։ Մենք կբացատրենք միայն առաջին բարդ նախադասությունը։ Առաջին կետը ստորակետ է և ոչ մի տարակույսի տեղ չի թողնում, որովհետև նրանով տրոհված հատվածը երկրորդական նախադասություն է, լրացնում է գլխավորի միտքը, երկրորդ կետը միջակետ է, որովհետև նրանով տրոհված առաջին և երկրորդ մասերը կիսով չափ անկախ են, սակայն շարահյուսորեն մի ամբողջ մտքի շուրջ են հյուսված։ Հաջորդ չորս կետերը նույնպես պետք է միջակետեր համարել, որովհետև, ինչպես տեսանք միջակետի բաժնում, դրանցով տրոհված բառերն ու բառակապակցությունները և պարզ նախադասությունները ունեն համադասության իմաստ։ Վերջին կետը անվիճելիորեն վերջակետ է, հեղինակն անցնում է նոր միտք արտահայտելուն։ Հաջորդ նախադասության նոր տողից և գլխագրով սկսելը սրա ակնհայտ ապացույցն է։

Այս տեսակետից դրությունն ավելի բարենպաստ է էջմիածնի ավետարանում (X դ.)։ Այստեղ արդեն բազմաթիվ էջերում ստորակետն իր ձևով այնքան որոշակի է գործածված, որ վիճել անհնարին է։ Օրինակ՝

«Հայս իբրեւ ասաց, ինքն մնաց աշդէն
Ի Գաղիղեա իբրեւ ելին եղբարքն նորա, ապա եւ
Բնրն եւ ի տանն ոչ յայտնի, աշդ իբրեւ
Ի՞ ծածուկ։ ~ »

կամ՝

«Այդ ես ասեմ ձեզ. եթէ ամենայն որ
բարկանա եղբար իւրում տարապարտուց,
պարտաւոր լիցի դատաստանի։ ~ »

Անդրադառնալով ստորակետի գործածության և ծագման հարցին՝ Հ. Տաշյանը գրում է՝ «Գլխագիր և փոքր երկաթագրի մեջ (Ա, 1—2, 3) կը տեսնենք՝ բաց ի կետեն (և վերջակետն ալ որ կա նաև երկաթագրերու մեջ)՝ գործածված նաև ստորակետ (,)», տողեն շատ վար Ա, 1 օրինակին մեջ, գրեթե նույնպես Ա, 5 կտորին մեջ»²։

Էջմիածնի ավետարանի կետագրությունը ապացույց է այն բանի, որ ստորակետն իր աշխարհի ձևով և դիրքով հայերի մոտ գործածվել է շատ վաղուց (X դ.)։

Առաջին գրավոր վավերագիրը ցույց է տալիս, որ ստորակետն առկա է եղել և գործածվել է X դարից։

Անանուն մեկնիչը ստորակետի մասին խոսելիս այն կապում է ընթերցանության հետ նաև գտնում է, որ ստորակետը պետք է կարդացվի ոչ թե քաղաքական, այլ խոնարհ ձայնով, երկարացնելով, ձգելով։

¹ Լաղարյան ճեմարանի ավետարան, էջ 17 և 18։

² Հայկական ՍՍԽ Մատենադարան, ձեռ. № 2374 (986), էջ 192ր։

³ Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, էջ 158։

Ստորակետով տրոհված նախադասության ընթերցմանն առաջադրվող պահանջը համընկնում է մեր այսօրվա մեթոդական պահանջի հետ: Ահա թե ինչ է գրում Անանուն մեկնիչը. «Բայց դիտելի է թե ոչ ինչ ստորակետ բացարձակ ձայնի առի, խոնարհեցուցանել և երկարել առ ի վերայ ածելոյ զկատարեալ տրամախոհութիւնն»:

Համամ Արևելցու (IX դ). մոտ ստորակետով են տրոհված կոչականները. Օրինակ՝ «զայս պատուիրեմ քեզ, որդեակ իմ Տիմոթէոս»¹:

Խոսելով ուսերենում ստորակետի գործածության և ծագման ժամանակի մասին, ռուս պալեոգրաֆներից մեկը գրում է, որ XV դարում հանդես եկած ստորակետը գործածվել է վերջակետի (точка) իմաստով²:

Սրանից մեզ համար պարզ է դառնում նախ այն, որ ռուսաց լեզվում ստորակետը հանդես է գալիս բավական ուշ շրջանում, XV դարում, երկրորդ, որ այն սկզբում գործածվել է վերջակետի նման. սրանց երկուսի միջև տարբերությունը քիչ է եղել:

Ն. Ս. Չանն ու Լ. Վ. Չերեպինը իրենց «Ռուսական պալեոգրաֆիա» գրքում գրում են. «Ստորակետը, որ բյուզանդական տեքստերում գործածվում էր դեռևս IX դարից, ռուսական ձևադրերում հանդիպում է ավելի ուշ շրջանում, զլիսովորապես XV դարում: Համաճարար ստորակետի երևան գալը պետք է բացատրել հարավ-սլավոնական ազդեցությամբ, որն այդ ժամանակ ռուսական գրի զարգացման գործում մեծ նշանակություն ուներ»³:

Ռուս պալեոգրաֆներից մեկ ուրիշը՝ Վ. Կլասովսկին ստորակետի գործածության սկիզբը ռուսական գրականության մեջ համարում է XVI դարը⁴:

Հետագա դարերի հայկական ձևադրերում ստորակետը կամաց-կամաց որոշակի ձև է ստանում, վերջնականապես դառնում է բարակ պոչավոր, փոքր գլխիկով մի կետ՝ տարբերվելով միջակետից: Տասներորդ դարից հետո, երբ վերջակետը գործածվում է երկու կետով, միջակետի և ստորակետի ձևերն էլ փոխվում են և բավական հստակ տարբերակում է մտնում սրանց մեջ. Օրինակ՝ ա) «Ըստ արիւնի ճանապարհորդաց, որ նստին և հանգիստ առնուն»⁵, բ) «Քանզի յենթադատութենէն զգարութիւնն, իսկ յառողանութենէն՝ զարուեստն, իսկ ի տրոհութենէն՝ զպարունակ մի՛տան՝ տեսանեմք»⁶, գ) «Եւ ՚ի նորին յինն և ՚ի տասն ամին նստի կաթողիկոս հայոց տէր ներսէս ամս քսան, և հայ թուականն հարիւր և մկտասան էր»:

Բերված օրինակներից պարզ երևում է, որ ստորակետի, միջակետի և վերջակետի տարբերումը ձևի տեսակետից սկսվում է X դարից, հետագայում աստիճանաբար որոշակի ու համառարած է դառնում և շարունակվում մինչև մեր օրերը:

Այսպիսով, ձևադրերի ուսումնասիրությունները մեզ բերում են այն համոզման, որ գրաբարի շրջանում մենք ունեցել ենք զգալիորեն մշակված, խոսքը տրոհող ու բացահայտող կետադրություն: «Կետադրություն» տերմինի տակ հասկացվել է կետ ավարտյալը, միջակետը և ստորակետը (վերջակետ, միջակետ և ստորակետ): Մինչև տասներորդ դարը վերջակետի փոխարեն դրվել է մի կետ, իսկ X դարից սկսած այն դառնում է երկու կետ: Եղված երեք կետերը նույնությամբ գործածվել են և՛ միջիմ դարերում, և՛ այժմ, սակայն շարահյուսության մեջ տեղի ունեցող ճշգրտումների ու փոփոխությունների հետ միասին ընդարձակվել, ծավալվել ու ճշգրտվել են նաև դրանց կիրառման սահմանները:

Այս բոլորով հանդերձ, գրաբարի շրջանում կետադրությունը մի ընդհանուր համակարգի տակ չի դրվել հայ պետականության բացակայության և դպրոցական ցանցի սահմանափակության պատճառով: Այս հարցում պակաս դեր չեն խաղացել նաև գրիչները: Տարբեր գավառներում և տարբեր դիտելիքների ու հակումների տեր արտագրողները բերականական աշխատություններում եղած ընդհանուր սահմանումներից ու կարգից շեղումներ են կատարել, որի հետևանքով էլ գրչագիր մատյաններում առաջացել են որոշ տարատեսակություններ:

¹ Ն. Մ. Չանն, Նշվ. աշխ., էջ 255:

² Ф. Карский, Славяно-Кириловская палеография, էջ 224:

³ Н. Чзев и Л. Черепин, Русская палеография, Москва, 1946, էջ 159—160:

⁴ В. Классовский, Знаки препинания в пяти важнейших языках, էջ 3:

⁵ Հայկական ՍՍՏ Մատենադարան, ձեռ. № 2771, էջ 12ր:

⁶ Նույն տեղում, ձեռ. № 8057, էջ 306:

ПУНКТУАЦИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. М. МХИТАРЯН

(Р е з ю м е)

История армянской пунктуации тесно связана с историей армянской письменности, которая появляется в конце IV в. Основы армянской письменности заложены гениальным армянским ученым-лингвистом Месропом Маштоцом, который составил армянскую азбуку. Так как до нас не дошли рукописи V—VIII вв., то мы вынуждены были для восполнения пробелов в истории армянской пунктуации использовать эпиграфические надписи и работы армянских толкователей грамматики Дионисия Фракийского.

На основании рукописей и трудов по грамматике можно сделать вывод, что, начиная с V в., в армянской письменной речи употреблялось три пунктуационных и десять интонационных знаков. Граматики периода габара имели довольно ясное представление о расчленении синтаксической конструкции на соответственные части. Законченность предложения обозначалась знаком «кет авартял» (ставилась одна точка выше строки). В середине предложения паузы обозначались «мичакетом» (ставилась одна точка, но на строке) и сторакетом (запятой). Некоторые грамматики считали «кет авартял» (точку) «царем», а остальные два знака — «слугами» его. До X в. «кет авартял» (точка) употреблялся в виде одного знака, который имел форму квадрата, а иногда — форму четырехугольника и ставился выше строки, а мичакет — на строке. До X в. мичакет и запятая по своей форме были похожи друг на друга. В Лазаревском евангелии (1887 г.) запятая местами употребляется как нынешняя запятая.

Начиная с X в., в армянских рукописях точка обозначается двумя точками, мичакет — одной точкой (которой в русском языке соответствует точка с запятой), т. е. сохранилось прежнее графическое обозначение, и запятая оформилась как толстая головка с маленькой линией, опущенной вниз. Этот знак похож на нынешнюю запятую. Такая запятая обнаружена нами в Эчмиадзинском евангелии (X в.); ее частое употребление нами не вызывает никаких сомнений.

Двоеточие ставилось в конце предложения и обозначало законченность мысли.

Мичакет расчленял слитное предложение, а сторакет (запятая) употреблялся для расчленения сложноподчиненного предложения и между однородными членами предложения. Эти знаки препинания без изменения продолжают употребляться по настоящее время.

Следует отметить, что, в связи с уничтожением армянской государственности и ограниченностью школьной сети в период габара, не существовал единый подход к употреблению пунктуационных знаков. Переписчики часто употребляли знаки препинания по своему усмотрению.